ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 14

ք. Բյուրեղավան *« 26 » օգոստոսի» 2025թ.*

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքը՝ ի դեմս համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի, և «Էդուարդ Ղուկասյան Կիմիկի» անհատ ձեռնարկատերը, այսուհետ՝ «Գովազդատու»՝ ի դեմս Էդուարդ Ղուկասյանի (անձնագիր՝ 014793806, տրված՝ 05.05.2022թ. 059-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 20 շենք 26 բնակարան)՝ համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N 41-Ն որոշման և ՀՀ օրենսդրության, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բյուրեղավան համայնքի ղեկավարը 2025 թվականի օգոստոսի 26-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը թույլատրվում է տեղադրել 2 քմ ընդհանուր մակերեսով արտաքին այլ գովազդ՝ Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 31/73-1 հասցեում գտնվող հանրային սննդի կազմակերպման և իրականացման գործունեության համար առանձնացված շենքի ճակատային մասում:

1.2. Վահանակների չափերը և քանակը պայմանագրի կնքման պահին կազմում են 1.8 մ X 0.8 մ և 1.8 մ X 0.31 մ, ընդամենը՝ 2 մ^2:

2.ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. «Գովազդատու»-ն վճարում է տեղական տուրք 1 քմ գովազդային մակերեսի համար՝ ամսական 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ, ընդհանուր 2 քմ արտաքին մակերեսով գովազդի համար՝ ամսական 3000 (երեք հազար) դրամ:

2.2. Վճարումները կատարվում են Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202411 բանկային հաշվեհամարին՝ մինչև յուրաքանչյուր օրացուցային ամսվա 1-ը:

3.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 31/73-1 հասցեում գտնվող հանրային սննդի կազմակերպման և իրականացման գործունեության համար առանձնացված շենքն օգտագործվում է համաձայնագրի, որն հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը, հիման վրա:

3.2 Գովազդի չափերը, տեսքը փոխելու մասին «Գովազդատու»-ն պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բյուրեղավանի համայնքապետարանին:

3.3 Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի N 41-Ն որոշմամբ սահմանված պարտավորությունները «Գովազդատու»-ի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բյուրեղավան համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով `«Գովազդատու»-ից ստանալով համապատասխան փոխհատուցում:

3.4 Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, «Գովազդատու»-ն վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

3.5. «Գովազդատու»-ի կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում՝ համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման, դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է«Գովազդատու»-ին:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

4.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի լրիվ կամ մասնակի չկատարման համար, եթե այդ չկատարումը հետևանք է այնպիսի հանգամանքների, որոնք դուրս են կողմերի վերրահսկողությունից և կարող են որակավորվել որպես արտակարգ իրավիճակ կամ այլ աղետ (բնական աղետներ, ջրհեղեղ, հրդեհ, պատերազմ և այլն):

4.2. Եթե վերոհիշյալ հանգամանքներից որևէ մեկը անմիջականորեն ազդել է պայմանագրային պարտականությունների ժամկետում չկատարման վրա, սույն պայմանագրի ժամկետը երկարացվում է այդ հանգամանքների տևողության ժամկետով:

4.3. Այն կողմը, որի պարտավորությունների կատարման վրա ազդել են այս հանգամանքները, պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ քան 10 տաս օրվան ընթացքում՝ սկսած դրանց վրա հասնելու պահից, գրավոր ծանուցել մյուս կողմին:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ	ԳՈՎԱԶԴԱՏՈՒ Ա/Ձ «ԷԴՈՒԱՐԴ ՂՈՒԿԱՍՅԱՆ ԿԻՄԻԿԻ»
Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ	Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ
ք. Բյուրեղավան, Վազգեն Ա Վեհափառ փողոց թիվ 1 վարչական շենք	ք. Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց 31/73-1
Հեռախոսահամար՝ 0222 6 32 36	Հեռախոսահամար՝ 094 97 33 68
ՀՎՀՀ - 03546187	ՀՎՀՀ - 43175578
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական բանկ	
Հ/Հ 900105202411	
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ	Ա.Զ. ԷԴՈՒԱՐԴ ԴՈՒԿԱՍՅԱՆ